ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ

բնութագիրը 2012 թվականի հունվարին[1]

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի եկամուտները հունվար ամսին կազմել են 58.8 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 37.2 մլրդ դրամ, որոնք համապատասխանաբար 32.1%-ով և 17.7%-ով ապահովել են ՀՀ կառավարության առաջին եռամսյակի ծրագրի կատարումը: Հարկ է նշել, որ չնայած բյուջետային ծախսերի համեմատաբար ցածր կատարողականին՝ ապահովվել է պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը: «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Մասնավորապես՝ արտաբյուջետային եկամուտները կազմել են 989.5 մլն դրամ կամ առաջին եռամսյակում նախատեսված մուտքերի 35.2%-ը, իսկ ծախսերը՝ 489.2 մլն դրամ կամ եռամսյակային ծրագրի 17.3%-ը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 6.5%-ով, ծախսերի գծով՝ 3.9%-ով:

ՀՀ պետական բյուջեի եկամուտները

2011 թվականի հունվարի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 3%-ով կամ 1.7 մլրդ դրամով, որը հիմնականում ապահովվել է հարկային եկամուտների աճի հաշվին:

Պետական բյուջեի եկամուտների 94.3%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 5.7%-ը՝ այլ եկամուտների հաշվին:

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

2012 թվականի հունվար ամսվա ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 55.4 մլրդ դրամ հարկային եկամուտներ, պետական տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, որոնք կազմել են եռամսյակային ծրագրի 31.4%-ը: 2011 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 4.6%-ով կամ 2.4 մլրդ դրամով, ինչը մեծ մասամբ պայմանավորված է ավելացված արժեքի հարկի աճով: Նախորդ տարվա հունվարի համեմատ աճ է արձանագրվել նաև եկամտահարկի, ակցիզային հարկի, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

2012 թվականի պետական բյուջեի հունվար ամսվա հարկային եկամուտներն ու տուրքերը կազմել են 46.2 մլրդ դրամ, որի 53.2%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին: Այն կազմել է 24.6 մլրդ դրամ և 11.3%-ով կամ 2.5 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից 9.5 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 15 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից: Հարկ է նշել, որ ԱԱՀ-ի մուտքերի աճն ապահովվել է ներքին շրջանառության հաշվին, որից ստացված մուտքերն ավելացել են 46.1%-ով, մինչդեռ ներմուծման գծով մուտքերը նվազել են 19.1%-ով:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 10.2%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով 4.7 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 1 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 3.7 մլրդ դրամ: Ակցիզային հարկի գծով նույնպես արձանագրվել են նույն միտումները, ինչ որ ԱԱՀ-ի գծով. տեղական արտադրության ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացված մուտքերն ավելացել են 21.3%-ով, իսկ ներմուծվող ապրանքների գծով մուտքերը՝ նվազել 27.9%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 9.4%-ը ձևավորվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 4.3 մլրդ դրամ: Նախորդ տարվա հունվարի համեմատ շահութահարկի մուտքերը նվազել են 19%-ով կամ 1 մլրդ դրամով:

2012 թվականի հունվարին ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 6.1 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 13.2%-ը և 18.1%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են 1.2 մլրդ դրամ կամ հարկերի և տուրքերի 2.7%-ը և 21.4%-ով զիջել 2011 թվականի համապատասխան ցուցանիշը:

2012 թվականի հունվար ամսվա ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 1.6 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով առաջին եռամսյակի ծրագրի 35.6%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են 16.5%-ով:

Հաշվետու տարում գործունեության առանձին տեսակներից գանձվել են 1.6 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 3.5%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է 2.3%-ով:

2012 թվականի հունվար ամսին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 617.7 մլն դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ՝ կազմելով հարկերի և տուրքերի 1.3%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտները նվազել են 8.5%-ով՝ հիմնականում պայմանավորված այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու և ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող վճարների նվազմամբ:

Հաշվետու ամսում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 1.4 մլրդ դրամի այլ հարկեր՝ կազմելով հարկերի և տուրքերի 2.9%-ը: Մասնավորապես՝ 898 մլն դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 63.4 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 3.4 մլն դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճարները, 10.1 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 28 մլն դրամ՝ ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղու ներմուծման թույլտվության համար սակագնային քվոտայի վճարը, 71.7 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 246.2 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 20.4 մլն դրամ՝ արտոնագրային վճարները և 43 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա հունվարի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշը նվազել է 35.2%-ով կամ 738 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարների նվազմամբ:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 2012 թվականի հունվար ամսվա եկամուտները կազմել են 9.2 մլրդ դրամ՝ 8.2%-ով կամ 700.6 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

2012 թվականի հունվարին պետական հիմնարկների արտաբյուջետային ծրագրերի շրջանակներում պետական բյուջե են մուտքագրվել 4.6 մլն դրամի դրամաշնորհներ:

Հաշվետու ամսում ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 3.4 մլրդ դրամ՝ 51%-ով ապահովելով առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշը: Նշված գումարից 941.9 մլն դրամը կազմել են ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները: Ծրագրի համեմատաբար բարձր կատարողականը հիմնականում ապահովվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի, ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների և տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, ինչպես նաև հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից մուտքերի հաշվին, որոնք գերազանցել են եռամսյակային ծրագրային ցուցանիշները համապատասխանաբար 69.2, 10.4 տոկոսով և 11.9 անգամ: 2011 թվականի հունվարի համեմատ այլ եկամուտները նվազել են 17.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի նվազմամբ:

<u>ՀՀ պետական բյուջեի ծախսերը</u>

2012 թվականի հունվար ամսվա ընթացքում կատարված պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 0.7%-ով կամ 260 մլն դրամով: Ընդ որում, աճ է արձանագրվել ընթացիկ ծախսերի՝ հիմնականում նպաստների և կենսաթոշակների գծով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերում գրանցվել է 46.6%-ով անկում:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 36.4 մլրդ դրամ՝ 18.2%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը: Նախորդ տարվա հունվարի համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 3.5%-ով կամ 1.2 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 2.6 մլրդ դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի

վարձատրությանը, որը նախորդ տարվա հունվարի ցուցանիշը գերազանցել է 0.4%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 420.7 մլն դրամ, որը կազմել է եռամսյակային ծրագրի 1.2%-ը և 23.5%-ով գերազանցել նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 1.4 մլրդ դրամ տրամադրվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով եռամսյակային ծրագրի 15.2%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից շուրջ 1.2 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 193.8 մլն դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Պետական պարտքի սպասարկման ծախսերը 22.4%-ով զիջել են նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 337.5 մլն դրամի սուբսիդիաներ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 8.1%-ը և 23.1%-ով գերազանցելով նախորդ տարվա հունվարի ցուցանիշը:

3.8 մլրդ դրամ են կազմել պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները, որից 3.6 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 188.2 մլն դրամը՝ միջազգային կազմակերպություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին տրամադրվել են 2.7 մլրդ դրամի դոտացիաներ, որոնք նախորդ տարվա հունվարի համեմատ գրեթե չեն փոփոխվել: Դրամաշնորհների եռամսյակային ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 17.2%-ով, իսկ նախորդ տարվա հունվարի համեմատ նշված ծախսերն աճել են 9.4%-ով:

Ընթացիկ ծախսերի 58.3%-ը՝ 21.2 մլրդ դրամ, ուղղվել է սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարմանը՝ ապահովելով ներկայացված բոլոր պարտավորությունների կատարումը և արձանագրելով առաջին եռամսյակի ծրագրի 28.9% կատարողական: Մասնավորապես՝ նշված գումարից 16.2 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները, 5.1 մլրդ դրամ՝ նպաստները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նպաստների և կենսաթոշակների ծախսերն ավելացել են 6.6%-ով կամ 1.3 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցներից 6.6 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ կազմելով եռամսյակային ծրագրի 17.4%-ը և 2.3%-ով զիջելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները հունվար ամսին կազմել են 813.4 մլն դրամ կամ եռամսյակային ծրագրի 7.9%-ը: Մասնավորապես՝ 956 մլն դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, որոնց

եռամսյակային ծրագիրը կատարվել է 8.9%-ով: 142.6 մլն դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ կազմելով եռամսյակային ծրագրի 32.3%-ը: Նախորդ տարվա հունվարի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշը նվազել է 54.4%-ով՝ հիմնականում պայմանավորված շենքերի և շինությունների վրա կատարված ծախսերի նվազմամբ:

ՀՀ պետական բյուջեի հավելուրդը

2012 թվականի հունվար ամսվա ընթացքում ՀՀ պետական բյուջեն կատարվել է 21.6 մլրդ դրամ հավելուրդով՝ առաջին եռամսյակի ծրագրով նախատեսված 27.3 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Մասնավորապես՝ ներքին ֆինանսավորումը կազմել է -17.9 մլրդ դրամ, արտաքին ֆինանսավորումը՝ -3.7 մլրդ դրամ:

Ներքին աղբյուրներում -6.1 մլրդ դրամ են կազմել փոխառու զուտ միջոցները (գանձապետական պարտատոմսերի զուտ մարումը), -11.8 մլրդ դրամ՝ ֆինանսական զուտ ակտիվները: Վերջին ցուցանիշը ձևավորվել է բյուջեի ազատ միջոցների շուրջ 12.2 մլրդ դրամով ավելացման և նախկինում տրամադրված վարկերի վերադարձից 322.3 մլն դրամ մուտքերի ստացման արդյունքում:

Արտաքին աղբյուրներում 153.8 մլն դրամ ուղղվել է արտաքին պարտքի մարմանը: -3.5 մլրդ դրամ են կազմել ֆինանսական զուտ ակտիվները, որից շուրջ 3.3 մլրդ դրամը հատկացվել է ԼՂՀ-ին՝ որպես միջպետական վարկ, 209.9 մլն դրամ ուղղվել է բաժնետոմերի և կապիտալում այլ մասնակցության ձեռք բերմանը, 4.6 մլն դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված արտաբյուջետային դրամաշնորհային միջոցների մնացորդը: